ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՉՈՐՉՈՓՅԱՆԻ
(1889—1970)

Սույն թվականի հուլիսի 14-ին Ռոստով քաղաքում, 81 տարեկան հասակում, վախճանվեց արժ. տ. Մկրտիչ ավագ քահանա Չորչոփյանը:

Հանգուցյալ տ. Մկրտիչ քահանան ծնվել է 1889 թվականին Նոր Նախիջևանում: Կրթությունը ստացել է Բեսարաբիայի հայոց թեմական դպրոցում, որի դասընթացը վերջացրել է 1906—1907 ուսումնական տարում:

Հանգուցյալը հմուտ է եղել եկեղեցական երգեցողությանը և հայկական ձայնագրությանը: Նրա երաժշտության ուսուցիչն է եղել տ. Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանը: 1908—1916 թվականներին տեր Մկրտիչը վարել է դպրի պաշտոն տեղի ս. Աստվածածին և ս. Նիկողայոս եկեղեցիներում: Տ. Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանի կողմից 1916 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1918 թվականին՝ քահանա:

1910—1918 թվականներին հանգուցյալը տեղի թեմական դպրոցում և գիմնազիայում վարել է երգեցողության և կրոնի ուսուցչի, 1928—1935 թվականներին՝ հայոց հոգևոր խորհրդի քարտուղարի, իսկ 1940—1945 թվականներին՝ Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնները:

Իր եկեղեցանվեր գործունեության համար 1926 թվականին Տ. Գևորգ Ե կաթողիկոսից ստացել է իրավունք՝ կրելու քահանայական լանջախաչ, 1928 թվականին՝ ծաղկյա փիլոն:

1948 թվականին Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կողմից արժանացել է ավագ քահանայության պատվի:

Հանգուցյալը 1940 թվականից մինչև իր կյանքի վերջին ամիսները քահանայագործել է Ռոստով քաղաքի ս. Լուսավորիչ և ապա ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիներում: 1968 թվականին Տ. Վազգեն Ա կաթողիկոսը նրան շնորհել է վարդապետական ականակուռ խաչ:

1970 թվականի ապրիլ ամսին հանգուցյալը անցել է կենսաթոշակի:

Տ. Մկրտիչ ավագ քահանան եղել է իր կոչման բարձրության վրա գտնված եկեղեցական, նվիրված իր ժողովրդի հոգևոր լուսավորության գործին, սիրված և հարգված իր ծխականներից:

Հանգիստ իր ոսկորներին: